

1915թ. ապրիլի 26-ի Լոնդոնի պայմանագիրը Փարիզի վեհաժողովում (1919թ. ապրիլ - մայիս ամիսներին):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Դաշնակիցները ստորագրել են Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ չորս պայմանագիր: Սրանք են 1915թ. ապրիլի 26-ի Լոնդոնի, 1916թ. փետրվարի 14-ի անգլո-ամերիկյան «անորսալի», նույն 1916թ. մայիսի 16-ի Սայքս-Պիկոյի և 1917թ. ապրիլի 19-21-ի Սեն-ժան-դը-Մորյենի վավերագրերը: Առաջինը նախատեսում էր Իտալիայի մասնակցությունը մեծ պատերազմում ու սահմանում էր նրա բաժինը Փոքր Ասիայում: Հոդված 9-ում ասվում է. «Եթե Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան ու Ռուսաստանը ռազմագրավեն պատերազմի ընթացքում Թուրքական Ասիայում [գտնվող] տարածքները, ապա Ադալիայի նահանգին սահմանակից Միջերկրական շրջանը պահվելու է որպես Իտալիայի պաշար, որն էլ լիազորված կլինի այն ռազմագրավել»: Պայմանագրի մեջ օսմանյան ասիական հողերի ընդհանրացած բնութագրումը հանգել է անգլո-ամերիկյան երկկողմանի փաստաթուղթ կազմելու իրողությանն ու հանդիսացել է նոր, ավելի մանրամասն Սայքս-Պիկոյի համաձայնության պատճառ, որն արդեն կնքվել է առանց Իտալիայի: Իսկ վերջինի պնդմամբ կայացել է Սեն-ժան-դը-Մորյենի եռակողմ դաշնագիրը, այս անգամ՝ առանց Ռուսաստանի: Փաստաթուղթը իտալացիներին էր հատկացնում Կոնիայի նահանգի մի մասը, իսկ այդ տարածքից դեպի հյուսիս սփռված հողերը դառնում էին իտալական ազդեցության ոլորտ¹:

Նշենք, որ 1919թ. փարիզյան բանակցությունների ժամանակ Մեծ Տերությունները քիչ էին հղում Սայքս-Պիկոյի համաձայնությունը (գուցե մարտի 20-ի հանդիպման բացառությամբ), թեև եռանդով էին օգտագործում Լոնդոնի պայմանագիրը: Այդ հանգամանքը 1917թ. հեղափոխությանը չես բացատրի, քանի որ լոնդոնյան փաստաթղթի տակ էլ կար Ռուսաստանի ստորագրությունը: Իրականում, Սայքս-Պիկոն ապահովում էր վերջինի ավարը, իսկ Լոնդոնի վերացական ձևակերպումը հնարավորություն էր տալիս ազատ խմբագրել ցանկացած քարտեզ: Եվ երկրորդ հանգամանքը՝ 1917թ. ապրիլից սկսած ԱՄՆ-ը դարձել է պատերազմի մասնակից: 1918թ. նոյեմբերի վիճակով Վ.Վիլսոնը կարողացել է ստիպել նրա զինակիցներին զինադադար կազմել իր «14 կետերի» հիման վրա: Նա ոչ միայն ազատ էր հիշյալ պարտավորություններից, այլ նաև ինքը թելադրեց աշխարհի բաժանման նոր սկզբունքները: Սրանք էին՝ անարգել առևտուրը, գաղութային տարածքների հսկողություն միջազգային կազմակերպության ուժերով ու նոր իշխանությունների աշխատանքը հպատակ ժողովուրդների համաձայնությամբ:

Նրա գործունեության հետևանքով, 1918թ. նոյեմբերի 9-ին Անգլիան ու Ֆրանսիան հայտարարեցին, որ նրանց գլխավոր նպատակն է.

«վերջնականապես ազատել թուրքերի կողմից այդքան վաղուց ճնշված ժողովուրդներին, հաստատել այդպիսի ազգային կառավարություններ ու վարչակարգեր, որոնց իշխանությունը բխում է ազգաբնակչության նախաձեռնությունից և ազատ ընտրությունից»: Սա վերաբերում էր «նաև այն հողերին, որոնց նրանք պատրաստվում են ազատել» քիչ հետո: Տերությունները «համաձայնվել են ճանաչել նման կառավարություններ, հենց որ նրանք հիմնադրվեն արդյունավետ կերպով»: Դաշնակիցների առաջնորդները խոստացան լայն աջակցություն, անկողմնակալ ու հավասար արդարացիություն, օժանդակություն տեղի բնակչության զարգացմանը, ու շատ այլ բաներ: Չհարտված հակասություններ հաղթահարելու համար Ժ.Կլեմանսոն դեկտեմբեր ամսին մեկնեց Լոնդոն, որտեղ հաստատել է Ֆրանսիայի իրավունքը Սիրիայի ու Կիլիկիայի հանդեպ: Ի պատասխան, Անգլիան իրենն է հայտարարել Մոսուլն ու Պաղեստինը²:

Բայց Փարիզի նիստերում Վ.Վիլսոնը ինքը հետաքրքրություն ցուցաբերեց Սիրիայի, Կիլիկիայի և Ֆիունե (այժմ՝ Ռիեկա) քաղաքի նկատմամբ: Առաջի հանգամանքը դժգոհացրեց Ֆրանսիային, իսկ քաղաքը՝ Լոնդոնի պայմանագրից դուրս, հրապուրում էր Իտալիայի վարչապետ Ս.Սոննինոին: Բացի դրանից, Դաշնակիցները Հունաստանին են լիազորել գրավել այն Ջնյուռնիայի շրջանը, որը խոստացել էին Իտալիայի կառավարությանը: Նման վիճակում բոլորից լավ դիրքեր ունեւր Դ.Լլոյդ Ջորջը՝ Ս.Սոննինոն միայն ձգտում էր «ռազմագրավման հետևանքով տիրույթ» հաստատելու վիճակին, իսկ բրիտանական վարչապետը արդեն ունեւր Կովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում 0,9-1 մլն. զինվոր³:

Վ.Վիլսոն-Ս.Սոննինոն հակասությունը և ԱՄՆ-ի հավակնությունը Կիլիկիայի նկատմամբ ստիպեցին Ֆրանսիայի վարչապետ Ժ.Կլեմանսոյին պնդել Լոնդոնի պայմանագրի իրավասությունը: Ֆրանսիացին պահանջում էր համապատասխանեցնել ավարներն ու ռազմական ջանքերը: Մի կողմից՝ սա վերոհիշյալ պայմանագրի սկզբունքն էր, մյուս կողմից՝ նվազեցնում էր Իտալիայի սպասելիքը: Այդ երկիրը հանել էր օսմանյան ուժերի դեմ ընդամենը 2.000 զինվոր: ԱՄՆ-ի նախագահն էլ այնտեղ զորք չունեւր, սակայն Վ.Վիլսոնը կարող էր մեջբերել Եվրոպայի դրամական պարտքերը: Ինքը հարկավոր էր որպես պարենի, օգնության, ու հետագա ներդրումների աղբյուր: Այդ առումով, բոլոր եվրոպացիներից լավագույն վիճակում նորից գտնվում էր Մեծ Բրիտանիան, որը չի տարել պատերազմ սեփական հողի վրա և հետևաբար՝ չի ունեցել ավերածություն: ԱՄՆ-ի մասնակցության դիմաց, Դ.Լլոյդ Ջորջը Վ.Վիլսոնին առաջարկեց Կ.Պոլիսն ու Արևմտյան Հայաստանը, որին հեշտությամբ ավելացվում էր և Արևելյանը, թեև երկուսն էլ պահանջում էին մեծ ծախսեր ու բանակի տեղավորում: Կ.Պոլիսը, առանձին վերցված, չէր կարող հատուցել այդքան խոշոր գումարներ: Եվ նույնիսկ Կովկասը դարձել էր իտալա-ամերիկյան մրցակցության առարկա: Այդ

դեպքում Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան բռնեցին ԱՄՆ-ի կողմը, քանի որ Ռուսաստանի սահմաններում հաստատվելու համար հարկավոր էր զգալի մի ուժ: Ամբողջ խաղը այնքան էլ միանշանակ չէր: Նույնիսկ 1919 թ. գարնան ամիսներին, երբ Դ.Լլոյդ Ջորջը ամենայն լրջությամբ ընդունում էր ամերիկյան մանդատը Օսմանյան կայսրության հանդեպ, երբ ինքը ստիպում էր պարզաբանել մյուս կողմի մտադրությունը, հենց նույն բրիտանացի վարչապետը չեզոքացնում էր ԱՄՆ-ի նախագահի՝ ամբողջ կայսրության կամ «համեղ պատառների» մանդատ ստանալու ճիգերը: Մինչդեռ, առանց նման պատառների, ԱՄՆ-ի Ծերակույտը չէր հաշտվում Չայստանի հովանավորություն ստանձնելու հեռանկարի հետ: Սա հավասար չափով վերաբերվում էր նաև Անատոլիային:

1919թ. ապրիլի 8-ից - մայիսի 16-ը Անգլիան ու Ֆրանսիան մշակել ու ստորագրել են Փարիզում Արևելյան նավթային համաձայնությունը: Մայիսի 8-ին նա արժանացել է Բրիտանիայի կառավարության ավանդությանը, ինչն էլ պաշտոնապես հաղորդեցին Մեծ խաղի ընկերներին: Օսմանյան հարցի շուրջ բանակցությունների ամենատեժ օրերին, երբ Վ.Վիլսոնը ցանկացել է մի մանդատ ստանձնել ամբողջ կայսրության նկատմամբ, ամերիկացիները հարցում արեցին նավթային այդ գործարքի վերաբերյալ: Որպես հետևանք, մայիսի 21-ին կայացած որոշմամբ Դ.Լլոյդ Ջորջը հրաժարվել է նրանից: Անհաջողության պատճառը ոչ այդքան տեղեկության «հոսակորուստ» է՝ որովհետև Չորսի խորհուրդում բավականին ազատ էին խոսում, այլ հողային հարցի գերապատվությունն է: Մեծ Բրիտանիայի վարչապետը գտնում էր, որ երկրորդը չի կարելի զիջել հուլմքի դիմաց: Նա «խորապես համոզված էր, որ քաղաքական կարևոր հարցերի քննարկումը պետք չէ խառնակել նավթային համաձայնությունների հետ, [մանավանդ, քանի որ նրանց մասնակցության] ներգրաված են մասնավոր ընկերությունները»⁴:

Անցնենք Վեհաժողովի աշխատանքին ու նրա Չորսի խորհրդի օրացույցին: Վերջինի արձանագրությունները կարելի է ընթերցել «Միացյալ Նահանգների միջազգային հարաբերությունների վերաբերյալ փաստաթղթերի» 5-րդ ու 6-րդ հատորներում⁵: Հիշեցնեն, որ նրա խորհրդի քննարկումներն ու որոշումները գաղտնի էին:

Ապրիլի 9-ին Գերագույն ռազմական խորհրդը վճիռ կայացրեց, որ «իտալական զորքերը պետք է փոխարինեին [այն] բրիտանացիներին, որոնք հիմա Անդրկովկասում կարգ ու կանոն են պահպանում»: Անտեսելով անգլիացի հրամանատարության դժգոհությունը, այդ որոշումը իրականացվեց, թեև զգալի ձգձգումով: Որոշումից դեռևս անտեղյակ, ամսի 17-ին Ա.Ահարոնյանի, Պողոս Նուբարի և Ա.Տեր-Չակոբյանի կազմով Չայկական պատվիրակությունը հանդիպեց Վ.Վիլսոնի հետ: «Եթե Ամերիկան երբևիցե ընդունի որևէ երկրի մանդատ, դա անպատճառ Չայաստանը կլինի, - ասել է նախագահը: - Չայաստանին օգնելու միասիան միակ պատճառն է, որ կարող է Ամերիկային չեզոքությունից հանել և Ասիայի գործերի մեջ խառնել: ...Պետք է ասեն, որ ես աշ-

խատում են ձեր ուզած չափով ձեր տերիտորիան ապահովելու հայ ժողովրդին, թեև ուրիշ կողմնակի ակտորժակներ կան»: Պատգամավորները իմացան, որ Ազգերի լիգան նվազեցնելու է պետությունների իրավասությունները, և հիմա կառավարությունները հաշվետու են լինելու նրա առջև: Վ.Վիլսոնը հիշատակեց, որ դեռևս հայտնի չէր Ծերակույտի վերաբերմունքը նոր կազմակերպության նկատմամբ: Հանդիպումը ոգեվորում էր և Ա.Ահարոնյանի գնահատումով «Հայաստանի մանդատը Ամերիկան է... ընդունելու, մնունում է ձեվականություն»: Թեև զորքի հեռացումը առդեն տագնապ էր ներշնչում⁶:

Երկու օր հետո, 19-20-ին Վ.Օրլանդոն բարձրացրեց Լոնդոնի պայմանագրի հարցը, պահանջելով Ֆիումե քաղաքը: Վ.Վիլսոնը առարկեց, որ Թուրքիայի նկատմամբ պետք է տարածվեն նրա հայտարարած սկզբունքները: Քաղաքը բնակեցված է խորվատներով, ուստի նա չպետք է անցնի Հռոմի իշխանության ներքո, պնդում էր նախագահը: Անգլա-ֆրանսիական դաշինք պաշտպանում էր 1915թ. փաստաթուղթը, թեև Ժ.Կլեմանսոն ընդունում է վավերագիրը չէր հանձնում վերոհիշյալ վայրը Իտալիային: Հնարավոր չէ պնդել վավերագրի իրավասությունը, և անմիջապես խախտել նրա դրույթները: Դ.Լլոյդ Ջորջը պատճառաբանում էր նրա մերժումը ինքնորոշման սկզբունքներով⁷:

Ապրիլի 21-ին Դ.Լլոյդ Ջորջն ու մայե ժորժը ներկայացրեցին արխիվում չպահպանված Թուրքիայի բաժանման քարտեզը: Այն Իտալիային էր տրամադրում ամբողջ Անատոլիան, Ջնյուռնիայի շրջանը տրվում էր Հունաստանին, իսկ Կ.Պոլիսի ու Հայաստանի մանդատը՝ ԱՄՆ-ին: Վ.Վիլսոնը մերժում էր իտալացիների հետ հնարավոր հարևանությունը: Մեծ Բրիտանիայի վարչապետը պատրաստ էր իտալական մանդատը փոխարինել ազդեցության ոլորտով, ապա առևտրաերկաթուղային արտոնությամբ: Բայց նախագահի կարծիքը չէր փոխվում՝ ինքը չէր ընդունում Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, նույնիսկ ամերիկացած տեսքով: Ամսի 24-ին Վ.Օրլանդոն սկզբունքային բնույթ տվեց փափագելի քաղաքի պանկանելության հարցին, թե չէ ինքը պատրաստ է հեռանալ Փարիզից (ինչն էլ տեղի ունեցավ հաջորդ իսկ օրը): Ի պատասխան եվրոպացի մյուս երկու առաջնորդները շարադրեցին հողային պահանջների փաստարկների նրանց ստորադասության համակարգը, որն է՝ ամենից կարևոր է բնակչության ցանկությունը, հետո գալիս են պատմությունը, ազգային կառուցվածքը, սահմանակցությունը, այնուհետև՝ տնտեսական ու առևտրային հանգամանքը, Մեծ պատերազմում ներդրումը, ոչ զավթիչի դերում լինելը, սահմանների նպատակահարմարությունն ու հատուցման իրավունքը⁸: Բանակցությունների ընթացքը իհարկե տարբերվում էր տեսությունից, բայց համեմայն դեպս:

Ուշագրավ է այդ օրերի վերլուծությունը հայ պատվիրակների կողմից: Պողոս Նուբարը, օրինակ, զգուշանում էր, որ Թուրքահայաստանի ապագան վտանգված է, «եթե նա միացվեր Ռուսահայաստանի հարցին հետ»: Սրա մասին իրեն ցուշացրեցին Դաշնակից դիվանա-

գետները, թեև «պետությունները ընդունեցին որպես սկզբունք ազգին երկու հատվածներ միացման գաղափարը»: Ա.Ահարոնյանի պատկերը ավելի վարդագույն էր. «Անգլիական գործերը ամբողջովին չեն հեռանա մեր աշխարհից մինչև ամերիկացիք չգան նրանց փոխարինելու», - հաղորդում էր ինքը Ս.Տիգրանյանին: Միաժամանակ, ՀՀ պատվիրակության ղեկավարը ավելացրեց, որ ամսի 9-ին կայացած վճիռից երկու շաբաթ անց, ԱՄՆ-ի փորձագետները հաղորջել են նրա միջնորդությամբ բրիտանացիներին, որ եթե Դ.Լլոյդ Ջորջը ցանկանա ռազմագրավել Արևմտյան Հայաստանը, ապա «նախագահ Վ.Վիլսոնը անմիջապես կտա իր համաձայնությունը»: Պողոս Նուբարի հետ միասին, հայ գործիչները հասցրել են այդ լուրը հասցեատիրոջը ու իմացան, որ Ամերիկյան պետք է հանձն առնի «Հայաստանի գրավելու պարտքը»: Ա. Ահարոնյանը լրացրեց. «Մեր բոլոր ճիգը համոզել, որ գեթ անգլիացիք ժամանակավորապես գրավեն մինչև ամերիկացիք հասնեն, անօգուտ անցավ»: Ինքը ճշտորեն զգուշացնում էր. «Մեծ արժեքը չպիտի տալ այն հայտարարությանը թե ժամանակավոր գրավումը նշանակություն չունի: ...Կատարած փաստը ահագին նշանակություն ունի նաև Խաղաղության կոնգրեսի առաջ»: Նշելով այդ ամենը, ինքը կրկնեց իր նախագուշակումը. «Կիսապաշտոնապես հայտնի է, վոր մեր մանդատերը Ամերիկյան է լինելու: ...Տերիտորիայի վեճը Ֆրանսիայի հետ Կիլիկիայի շուրջը հոգուտ մեզ է լուծվում, որովհետև... Ամերիկյան Կիլիկիան Հայաստանին կցելու [պահանջ է] դնում որպես նախապայման Հայաստանի մանդատը ընդունելու և առհասարակ դիվանագետներեն մեր հարցը գտնվում է գոհացուցիչ և հուսալից վիճակում: Մեր տպավորությունն այն է, վոր մինչեվ մայիս ամսի կեսերը մեր խնդիրը կկարգադրվի»⁹:

Ապրիլի 26-ին պարզվեց, որ իտալական բանակը ինքնական կերպով շարժվել է դեպի Ֆիումե: Ժ.Կլեմանսոն լրացրել էր Չորսի Խորհրդում, որ այդ երկրի ռազմանավն էլ ինքնական կերպով շարժվում է դեպի Ջնյուռնիան: Որպես հետևանք. 4 օր հետո ընդհարվել են ամերիկյան ու բրիտանական տեսակետները: Առաջինների կարծիքով հարկավոր էր հարգել ազգային մեծամասնության իրավունքը ու դիմել հանրաքվեի, երկրորդ կողմը պնդում էր անվտանգություն ապահովել անհրաժեշտությունը: Նրանց վեճին զուգահեռ, Միջերկրական ուժերի հրամանատար Ջ.Ֆ.Միլնը իր եզակի այց է կատարել Երևան: Ի պատասխան, երկու օր հետո Վ.Վիլսոնը փորձեց ներկայանալ որպես ողջ Կովկասի հովանավոր, պաշտպանելով տակ առնելով Կ.Պոլսում մնացած Ադրբեջանական պատվիրակությանը: Ինքը հանում էր Բաքվի հանրապետությունը Թուրքիայի դաշնակիցների շարքից, ինչը չի ստացել անգլա-ֆրանսիական դաշինքի համաձայնությունը:

Արձագանքելով Ջնյուռնիա քաղաքում իտալական ուժերի աճին, Դ.Լլոյդ Ջորջը առարկեց, որ նրանք դրդում են թուրքերին կոտորածներ շարունակելու և նրանց բանակը գործադրելուն: Ժ.Կլեմանսոյի բողոքի համաձայն, Իտալիան օգտագործում էր 1915թ. պայմանագիրը, Դաշ-

նակիցներին խռովեցնելու համար: Եթե Հռոմի ներկայացուցիչները չվերադառնան Վերսալը՝ ապա Լոնդոնի վավերագիրը կհայտարարվի ուժը մեկընդմիջտ կորցրած: Բրիտանացու աջակցությունն ստացած ամերիկյան ղեկավարը ճշգրտեց՝ հարկավոր է պարզաբանել, որ հենց Իտալիան է խախտել 1915-ի փաստաթուղթը: Որպես միասնության նշան, երեք կողմերն էլ ռազմանավեր տրամադրեցին Ջնյուռնիայի պահակության համար: Միաժամանակ հաստատվել է Վերսալյան պայմանագրի այն հոդվածը, ըստ որի Գերմանիան ճանաչում էր Ռուսական կայսրության բոլոր տարածքների անկախությունը, հրաժարվելով Բրեստ-Լիտովսկի պայմագրից:

Մայիսի 3-ին Դ.Լլոյդ Ջորջը կտրուկ ձևով հայտարարեց, որ չի զիջի Ֆիուլենյի հարցում: ԱՄՆ-ի ու Վեհաժողովի նախագահները ակնարկեցին իտալացիների հավասարաչափ սկզբունքայնությունը: Բրիտանացին արձագանքեց իր զորքերի անհապաղ դուրս բերման պահանջով: Վ.Վիլսոնը չէր ցանկանում դիմել զիջումներին, քանի որ սա նրան կստիպեր հարգել 1915թ. վավերագիրը: Անգլոսաքսոնական տերությունների միջև կար առանձին, 1916թ. փետրվարի 14-ի «անորսալի համաձայնագիր»: Դժվար է ասել, որքանով էին հետևում նրա կետերին, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի նախագահը կտրականապես չէր ընդունում լոնդոնյան փաստաթղթի կշիռը: Երբ նրան առաջարկեցին անցնել մանդատների բաժանմանը, ամերիկացին տվեց անորոշ պատասխան: Այնուհետև ինքը նշեց, որ օսմանյան հողերի առումով ԱՄՆ-ին, Բրիտանիային ու Ֆրանսիային հատկապես հետաքրքրում է Պաղեստինը: Ժ. Կլեմանսոն բողոքեց, որ անգլիացիք անընդունելի եռանդ են դրսևորում Սիրիայի հարցում¹⁰:

Ամսի 5-ին հնչեց մեկ հայտարարություն, որ մայիսի 7-ի դեմ Ս.Սոննինոն պետք է ժամանի Փարիզ: Սա մղեց այլ երկրների անձանց շտապ պարզաբանել Կովկասի դրությունը: Դ.Լլոյդ Ջորջը հիշեցնու էր, որ իտալացիք ռազմագրավել են փոքրասիական Մարմարիսի նավահանգիստը, նրանք գումարտակ ունեն Կոնիայում, և անտեսելով Դաշնակիցների պահանջը բանակ են իջեցրել Ադալիայում: Սեժ Բրիտանիան պահում է Կովկասում մեկ ու կես դիվիզիա, և ցանկանում է քննարկել նրանց հետ կանչի հնարավոր արդյունքները: Եթե իտալական ստորաբաժանումները գրավելու են Անատոլիայի մի մասը՝ նրանց շատ դժվար կլինի այնտեղից հանել: Օսմանյան մանդատների կարգավորումը հետաձգվում է Հ.Կինգի-Չ.Քրեյնի հանձնաժողովը առաքելու մտադրությամբ: Ուստի վարչապետը առաջարկում է անդրադառնալ զինված ուժերի նոր տեղավորման հարցին: ԱՄՆ-ի «զորամասերը պետք է գնան Կ.Պոլիս և ապահովվեն Հայաստանի համար: Բրիտանացիք դուրս կգան Կովկասից, իսկ ֆրանսիացիք կարող են կայազոր տեղավորել Սիրիայում, մինչդեռ հույներին հարկավոր է թույլ տալ ռազմագրավել Ջնյուռնիան, քանի որ իրականում նրանց հայրենակիցները հիմա ենթարկվում են կոտորածին, և նրանց օգնելու համար [այնտեղ] ոչ ոք էլ

չկա»: Ջորջը պետք է շարժվի իտալական դիվանագետների վերադարձից շուտ, ցանկալի է՝ առկա բանակցությունների մայիսի 5-ի կեսօրից հետո:

Վ.Վիլսոնը պատասխանեց, որ «չգիտեմ, որտեղից պետք է գտնի ամերիկյան զորքեր»: Բրիտանական Գլխավոր շտաբի պետ Յ.Ուիլսոնը ճշտեց, որ Կ.Պոլսի համար բավարար է մեկ դիվիզիա: «Չայաստանի համար ինքը չի կարողանում հաշվարկել անհրաժեշտ թիվը, քանի որ սա կախված է դրանից, թե ինչ խորությամբ նրանք պատրաստվում են թափանցել այդ երկիրը: Ներկայումս բրիտանացիք համաձայնվել են թույլ տալ իտալացիներին մուտք գործել Կովկասը»: Դ.Լլոյդ Ջորջը ակնարկեց նավթային գործոնը ու ԱՄՆ-ի նախագահը անմիջապես հակաճառեց այդ արշավանքին. «Ինչի՞ն է պետք որևէ զորքեր ուղարկել, բրիտանացիներին փոխարինելու համար»: Վարչապետի համաձայնությամբ Գլխավոր շտաբի պետ Յ.Ուիլսոնը պատասխանեց, որ ուրիշ պարագայում «այնտեղ կլինեն ամենասարսափելի կոտորածներ», Ա.Դենիկինն էլ կներխուժի Վրաստան: Այնուամենայնիվ, ինչն էլ լինի՝ բրիտանական զորքին հարկավոր է գնալ: Իսկ «ոչ պատրաստ» ամերիկացիները «ցանկալի են Չայաստանում ու որևէ դժվարությունների չեն հանդիպի, թեև Կովկասում նույնը չի լինելու»: Ի տարբերություն ԱՄՆ-ին, իտալացիների նույն երկրամաս ժամանումը հղի է լուրջ հետևանքներով:

Կարթագենին վերաբերող ասածվածքի համառությամբ Յ.Ուիլսոնը կրկնում էր, որ նրա զինվորները «պետք է գնան Կովկասից»: Նրանց կարելի է բերել Կ.Պոլիս, իտալացիներին դիմակայելու համար: Ժ.Կլեմանսոն պատրաստ էր դիմել նման քայլերին, երբ քննարկում էին Բուլղարիայի սահմանի խնդիրը: Բայց Վ.Վիլսոնը «լիակատար կերպով համոզված չէր՝ թե ինչ թվով զինվորական ուժեր նա կարող է ունենալ իր տրամադրության տակ»: Ու քանի որ Դ.Լլոյդ Ջորջի բնութագրումով, Կովկասը շատ հարուստ է, նախագահը «վախենում էր, որ իտալացիների, Կովկասը մուտքի թողտվությունը կապացուցի որ այս երկիրը շատ լուրջ է և վտանգավոր աշխարհի խաղաղության համար»: Արդյունքում, Յ.Ուիլսոնին հանձնարարել են հանդիպել Գերագույն ռազմական խորհրդի ամերիկյան ներկայացուցիչ գեներալ Տ.Բլիսի հետ, որպեսզի նա նույն օրվա կեսօրից հետո իր կարծիքը հայտնի ԱՄՆ-ի նախագահին: Իսկ մանդատների առումով, «հատկապես անդրադարձնալով Թուրքիային՝ նրան անհնարին է անմիջապես վճիռ կայացնել, արդյոք Միացյալ Նահանգները կարո՞ղ են վերցնել [նման] մանդատը»: «Որքանով սա վերաբերվում է Մեծ Բրիտանիային, ինքը չէր առարկի թուրքական մանդատների խնդրի կարգավորմանը, - հակաճառեց վարչապետը, - թեև ինքը լիովին գիտակցում է նախագահի Վիլսոնի առջև կանգնած դժվարությունները»¹¹:

Մայիսի 6-ի բանակցությունները հատկանշանական էին երկու հանգամանքներով՝ Վ.Վիլսոնը հստակ ասել էր, որ Ֆիումեն կարող է

հատուցվել որպես Լոնդոնի պայմանագրից հրաժարվելու գին: Ու Երկրորդը՝ «ամբողջ Թուրքիային հարկավոր է լինել մեկ մանդատի ներքո»: Ճիշն է՝ այն «ընդունելու միակ հիմք կարող էր ծառայել... թուրքերից ստորադաս ռասաների պաշտպանությունը»: Այժմ նախագահը ասում էր, որ Անատոլիայի խորքերի թափանցումը ծայրից ծայր հուզումներ կհարուցի կայսրության բոլոր շրջաններում: Կապելուվ օսմանյան խնդիրն ու Բալկանները, Սպիտակ տան ղեկավարը պահանջում էր Ալբանիայի անկախություն Իտալիայի հավակնություններից, իսկ Մեծ Բրիտանիայի վարչապետը խնդրում էր չչեղվել, քանի որ Ջոյնոնիայում գտնվում էին յոթ իտալական ռազմանավ ու սպասվում է զորքերի իջեցում: Վաշինգտոնցին սպառնաց, որ զինվորների չհեռանալու դեպքում Իտալիան ֆինանսավորում չի ստանա, իսկ Դ. Լլոյդ Ջորջը առաջարկեց հակակշռել այդ ստորաբաժանումները հունական 2-3 դիվիզիայով: Ելնելով Սեն-ժեն-դը-Մորյենի վավերագրից, ֆրանսիական և ամերիկյան կողմերը ընդունեցին նման մոտեցումը: Հաջորդ օրը պարզաբանվեց, որ 18.000 թուրքական զինվորների դեմ Հունաստանը հանում է մինչև 32.000 ռազմիկ: Հաստատվեց, որ այդ բանակը չի ստորադրվի Լ.Ֆ.Ֆրանչե դ'Էսպրեյին կամ Ջ.Ֆ.Միլնին, այլ ունենալու է զուտ հունական հրամանատարություն: Ֆրանսիացի զորավարին ու Միջերկրական նավատորմի ղեկավոր հրամանատար փոխ-ծովակալ Ս. Գաֆ-Քելթորպին նախապես տեղյակ կպահեն նոր կացության մասին:

Նույն օրը Ա.Խատիսյանն ու ՀՀ-ի արտգործնախարարությունը նրանց անհանգստություն էին արտահայտում. Ազգային պատվիրակությանը կարգադրել են դիմել Լ.Բուրժուային, որպեսզի վերջինը պարզաբանի՝ «անկախության նախնական ճանաչումը» նշանակում է, որ այն կարող է ցանկացած պահին հլվել, թե՞ ունի «արդեն» բառի իմաստը: «Որքանով մանդատավոր Տերության արգելքի իրավունքը համերաշխ է նման ճանաչման հետ: Ունենալու՞ են արդյոք այդ ազգերը դիվանագիտական ներկայացուցչություններ: ...Կկարողանա՞ն նոր անկախացած ժողովուրդները դուրս գալ Ազգերի լիգայից»: Ա.Խատիսյանը բողոքում էր Ա.Ահարոնյանին, որ «Անգլիական հրամանատարությունը ցանկանում է դրսի աշխարհը անտեղյակ պահել Կովկասի անց ու դարձերից, որոնք կարող են քաղաքական աշխարհի ուշադրությունը գրավել ու թերևս փոխել տալ բրիտանական հրամանատարության ինքնագլուխ կարգադրությունները, այս է պատճառը, կարծում ենք, որ անգլիացիք որոշ դժվարություններ են հարուցում Եվրոպայի, մանավանդ Ձեզ հետ կանոնավոր հարաբերության պահելու դեմ»: Ավելացնեն, որ իտալական բանակը Կովկասում տեղադրելու որոշումը, որը կայացավ մեծ Վեհաժողովի ապրիլի 9-ի նիստում, ՀՀ-ի կառավարությանը իմացել էր, Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար Վ.Թոմսոնի, մայիսի 10-ին ուղարկած նամակից: ՀՀ-ի արտգործնախարարություն գրանցել էր լուրը ևս մեկ շաբաթ ավելի ուշ:

Մայիսի 9-ին Դ.Լևոյդ Ջորջը ստիպված էր նորից անդրադառնալ ռազմական խնդիրներին: Նա ահագանգեց «Միացյալ Նահանգների ուժերի սրընթաց դուրս հանելու» առթիվ: Հասկանալի է, որ առանց բանակի օսմանյան մանդատների խոսակցությունը կրում էր զուտ տեսական բնույթ: Վ.Վիլսոնը չժխտեց, որ «ներկայումս Միացյալ Նահանգներն դեպի տուն գնացող նավերի վրա ամսական բեռնում են 300.000 մարդ»: Նա կոչեց բոլոր Դաշնակիցներին, «դատարկել Ռուսաստանը, ու թողնել ռուսներին, իրար հետ կռվել»: Իսկ Վ.Օրլանդոյի ու Ա.Սոննիհոյի վերադարձը հատկանշական էր դրանով, որ ելնելով 1915թ. Լոնդոնի վավերագրի 13-րդ հոդվածից, նրանք պահանջեցին հատկացնել նրանց երկրին լրացուցիչ մասնաբաժին՝ Աֆրիկայում¹²:

Ամսի 13-ին նախագահը դիմում է Ադրիատիկայի նոր մասնատմանը, ու նրա գծած սահմանները չեն համընկնում Լոնդոնի պայմանագրի հետ, թեև այդ անգամ ինքը մեծացրեց Իտալիայի բաժինը (որի մեջ չի մտել Ֆիլիպինները): Մեծ Բրիտանիայի դիվանագետները բացատրում էին, որ քաղաքի պատկանելության հարցը այլևս սկզբունքային է, քանի որ Մեծ Տերությունների ղեկավարները չեն ընդունում Իտալիային որպես նրանց հավասար կողմ: «Օրիանակ, նրանց հայտնի էր, որ մենք հարց ենք հարուցել. արդյո՞ք Միացյալ Նահանգները կարող են հանձն առնել պատասխանատվությունը Թուրքիայի որոշ մասերի նկատմամբ, սա մի պատվավոր ու դժվարին խնդիր է: Իսկ Իտալիային ոչ ոք չի խնդրել ստանձնել այս բեռը»: Գուցե նրանց պետք է հող տրամադրել Փոքր Ասիայում, կամ այլուր: Նրանց երկիրը ունի շատ օժտված անձինք, բայց աղքատ է՝ այնտեղ պակասում են ածուխը, երկաթը, ժողովուրդը փնտրում է արտագաղթի հարմար վայրեր: Դ.Լևոյդ Ջորջը «նկատի չունեմ, որ Իտալիային հարկավոր է առաջարկել ամբողջ Անատոլիա, բայց ուզում էր հարցնել. ինչու՞ չի հրավիրել նրանց ոստիկանություն անել ու զարգացնել Անատոլիայի որևէ մի մասը, որտեղ նրանք կգտնեին նրանց երկրից չտարբերվող աշխարհամաս»: Տարածաշրջանի խորքում կարելի է ապահովել ոռոգում: Ի դեպ, պատերազմի նախօրյակին իտալական արտագաղթը բոլորում էր տարեկան 800-900 հազար մարդ: «Ինչու՞ նրանց չուղղել դեպի Թուրքիան, որիեղ բնակիչ չունեն՝ Անատոլիան զարգացնելու համար»: Նույնը վերաբարում էր Սոմալիին:

Վ.Վիլսոնը արձագանքեց, թե Չնյուննիան՝ հարևան շրջաններով, պետք է անցնի Հունաստանին: Է.Վենիզելոսին հարկավոր է տալ նրա ուզածը՝ որպես ենթամանդատային գոտի: (Խոսակցությունը ծավալվեց Դ.Լևոյդ Ջորջի բերած քարտեզի շուրջ:) Վարչապետի հայեցողությամբ, ԱՄՆ-ին հատկացվում էր հայկական մանդատը, Ֆրանսիային՝ հյուսիսային, իսկ Իտալիային՝ հարավային Անատոլիան, Հունաստանին՝ Չնյուննիան: Վարչապետը «ամենայն անկեղծությամբ հույս էր տածում, որ Միացյալ Նահանգները վերցնելու են նաև Կ.Պոլսի մանդատը»: Ի պատասխան ինքը լսեց, որ նախագահը «ի վիճակի չէ կարգավորել

հարցը մինչև որ չվերադառնա» տուն և չիմանա, որ երկիրը պատրաստ է նման քայլին: Թուրքիայի ազդեցիկ տարրերը պահանջում են, որ կայսրությունը ոչ թե բաժանվի, այլ ստանա առաջնորդություն: «Պետք է լինի մեկ մանդատը ամբողջության համար»:

Ցանկալի է, որ լուծումը նմանակվի արաբական տարբերակին, իսկ «մանդատը չպիտի բաժանվի»: Բրիտանացին առարկեց. «Ինքը չի գտնում, որ [այդ մտահղացումը] հնարավոր է իրագործել կյանքում»: Նախագահը նշեց, որ հարավային Անատոլիան անհրաժեշտ է ղեկավարել, բայց նրա հյուսիսային մասում բավական կլինի խորհուրդներ հատկացնել: «Փոքր ուղեւոր» Դ.Լլոյդ Ջորջը փորձեց Իտալիային ապահովել նավահանգիստը ու դուրս մղել նրանից հույն մարտիկներին: Սակայն ամերիկացին կապում էր բոլոր հնարավոր զիջումները միայն Սոմալիի հետ: Եթե թուրքերը մերժեն նրանց հասցեագրած խորհուրդները՝ «կարող է առաջանալ ճնշում կատարելու անհրաժեշտություն, թեև սովորական մոտեցումը պետք է սահմանափակվի առաջնորդությամբ»: Ժ.Կլեմանսոն ակնարկեց, որ «Հայաստանը հեշտ խնդիր չի լինի» ԱՄՆ-ի համար, մանավանդ որ նախագահի ձևակերպման համաձայն, «նրա առջև կան այդքան զարհուրելի բովանդակության զեկուցագրեր Հայաստանի իրադրության վերաբերյալ, որ նա դժվարանում է նրանց կարդալ»:

Ֆրանսա-բրիտանական դաշինքը աշխատում էր «ամենից առաջ որոշել՝ ի՞նչ պարզ և հասնելու Իտալիային», բայց Վ.Վիլսոնը չէր զիջում հույն բնակչության շահերը: Վերջապես որոշեցին, որ ինքը գծելու է դալմաթական սահմանները, իսկ Դ.Լլոյդ Ջորջը՝ փոքրասիական: Իտալիան կարող էր ստանալ Ֆիումե քաղաքը՝ դրական արդյունքներով հանրաքվեն անցկացնելու պայմանով, «Դողեկանեզներ պետք է միացվեն Հունաստանին, որտեղ հաստատվի հույն լիիրավ անկախությունը: Իտալիային հարկավոր է մանդատ ունենալ հարավային Անատոլիայի մնացած մասի նկատմամբ, ու խորհուրդը ուրախ կլիներ, եթե պ.Յ.Նիկոլսոնը կարողանար սահմանագիծ քաշել, ելնելով տնտեսական հիմքերից»: ԱՄՆ-ի պատգամաբերը պնդում էր, որ ունենալով Ազգերի Լիգայի անդամությունը, նրա երկիրը ինքնաբերաբար երաշխավորելու է Թուրքիայի հետ հաշտության դրույթները: Բայց ուղեւորն ակնկալում էր Ամերիկայից շատ ավելի մեծ դեր, քանի որ «ինքը հույս էր տածում, որ Միացյալ Նահանգները կընդունեն մանդատը»¹³:

Մայիսի 14-ին թեժ պայքարը շարունակվեց: Դ.Լլոյդ Ջորջը ներկայացրեց իր և Յ.Նիկոլսոնի պատրաստած երկու բանաձևի նախագիծ: Առաջին փաստաթղթով «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը, Միացյալ Նահանգների անունից, ու Ծերակույտի հետագա անհրաժեշտ համաձայնությամբ Ընդունում է.

1. Մանդատ Հայաստանի Նահանգի հանդեպ, նա հաստատվում է այն սահմաններում, որոնց նկատմամբ համաձայն կլինեն Միացյալ Նահանգների, Բրիտանական, Ֆրանսիական ու Իտալական Պատվի-

րակությունները, որոնց հանձնարարություններն էլ, եթե դրանք կայացվում են միաձայն կերպով, ի կատար են ածվում առանց Խորհրդին ուղղված հետագա դիմումների:

2. Մանդատը Կոստանդնուպոլիս քաղաքի, Բոսփորի և Դարդանելների Նեղուցների, Մարմարա ծովի և այն մերձակա փոքր տարածքների հանդեպ, որոնց սահմանների վերաբերյալ որոշում են կայացնելու Միացյալ Նահանգների, Բրիտանական, Ֆրանսիական ու Իտալական Պատվիրակությունները, նրանց միջև կայացած համաձայնությամբ, և որոնց հանձնարարությունները, եթե նրանք միաձայն են, ի կատար են ածվում առանց Խորհրդին ուղղված հետագա դիմումների»:

Ըստ երկրորդ նախագծի «Որոշված է

(1) Որ թուրքական ինքնիշխանություն Կոստանդնուպոլսի, Եվրոպական Թուրքիայի, Նեղուցների և Մարմարա ծովի հատդեպ դադարեցվելու է:

(2) Որ Ջնյուռնիայի և Այվալի նավահանգիստն ու մերձակա շրջանը, ինչպես որ ցույց է տալիս քարտեզի վրա քաշած կարմիր գիծը, որն ընդգրկվում է գերազանցապես հույն բնակչությունը, ու նաև Դոդեկանեսների և Կաստելլորիզո կղզիները, հանձնելու են Յունաստանին, լիիրավ ինքնիշխանության ներքո:

(3) Այն, ինչ կմնա Անատոլիայից, Հայաստանին համար առաջարկած սահմանից դեպի արևելք, հաստատվելու է որպես ապագա Թուրք Պետությունը, որի հետ վերաբերվելու են հետևապես.

Նկատի առնելով այն փաստը, որ Թուրքական Կառավարությունը ունակություն չի ցուցաբերել, նրա ինքնիշխանության ներքո բնակիչների շահերը պաշտպանելու առումով, ու հիմա նա ի վիճակի չէ զարգացնել երկրի բնական պաշարները, մենք գիտակցում ենք, որ Թուրքիայի Պետության [բարեհաջող] ապագա [երաշխավորելու համար] պահանջվելու է արտաքին առաջնորդություն: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Արևմտյան Անատոլիայում կա բազմաշատ հույն փոքրամասնությունը, իսկ Ադալիայի նահանգի մերձավոր շրջաններում հաստատվել են Իտալիայի շահերը, գտնում ենք, որ Թուրքիային աջակցելու [նպատակով տրվելիք] մանդատը ավելի լավ է վստահել երեք Տերություններին:

Ուստի առաջարկվում է՝

(1) Որ Յունաստանին շնորհվի լիիրավ ինքնիշխանությունը արևմուտքում սփռված վերոհիշյալ երկրամասի ու կղզիների հանդեպ, որին գումարվում է մեկ մանդատը կարմիր բցագծով ընդգրկած հարևան երկրամասի հանդեպ, ինչպես էլ ցույց է տալիս քարտեզը:

(2) Որ Իտալիային շնորհվի մանդատը հարավային ծովափի հանդեպ, այն ձգվելու է Մակրի նավակայանից դեպի արևմուտք գետեղված կետից մինչ այն վայրը, որտեղ Հայաստանի առաջարկվող սահմանը հասնում է Միջերկրականին: Այդ, իտալական գոտու սահմանները, քարտեզի վրա նշվում են կանաչ գույնով, նրանք գծվել են պատշաճ

աշխարհագրական ու վարչական եզրեր ապահովելու մտադրությամբ, ու մինչև նույն ժամանակ կատարյալ հնարավորություն են տրամադրում Կոնիա նահանգի տնտեսական զարգացման ու ոռոգման համար:

(3) Ապագա թուրքական Պետության մնացած մասի հանդեպ մանդատը շնորհվելու է Ֆրանսիային:

(4) Թուրքական պարտքի հանդեպ դաշնակից պարտատուների իրավունքները ապահովելու է Օտտոման Յանրայի Պարտքի Վարչությունը, որը կընդունի մի այդպիսի ձև, ինչպես որ վճռեն Չորս Մեծ Տերություններն ու Յունաստանը: Նշանակվելու է փորձագետների Յանձնաժողով՝ այդ որոշումը իրագործելու համար անհրաժեշտ միջոցներ ուսումնասիրելու և զեկուցելու նպատակով»:

Վ.Վիլսոնը արդարացիորեն նկատել է, որ ծրագիրը տեղ չի թողնում առանձին և անկախ թուրքիայի համար: Բացի դրանից, հայկական մանդատի եզրերը դեռ չեն որոշվել, ուստի նա առաջարկում է քննարկել նրա փորձագետների մշակած լուծումը: Այդ պարագայում Ալեքսանդրետը զատում էին Կիլիկիայից, ու զանազանվում էր սևծովյան գիծը: Ի պատասխան բրիտանացին պնդեց, որ նպատակահարմար է աշխատել նրա ստեղծած քարտեզի շուրջ: Երբ պարզվեց իտալական մանդատի բովանդակությունը, ինքը իմացել է, որ ըստ ամերիկյան կողմի մտադրությանը հյուսիսայն Անատոլիայում տեղ գտած թուրքական պետությունը պետք է ապրի ֆրանսիական հսկողության տակ: Եվ իհարկե ընդունելի չէր այն վիճակը, երբ Թուրքիայի մայրաքաղաքը նստավայր դառնար ֆրանսիացի և իտալացի խորհրդականների համար, որոնք պետք է գործ ունենային մեկ երկրի տարբեր ծայրերի հետ:

Դ.Լլոյդ Ջորջը համամիտ էր, որ սա ծանրակշիռ փաստարկ է Անատոլիան չբաժանելու օգտին: Յետևաբար ինքը ընթերցել է Ա.Բալֆուրի հեղինակած ու Ֆորին օֆիսում պատրաստած հուշագիրը, որը պարունակում էր համատիրության գաղափար: Իրենց մտադրություններում անգլիացիք անընդունելի էին համարում վարչության այս ձևը, ու Ժ. Կլեմանսոն անմիջապես հիշեցրեց, որ համատիրությունը հղի է պատերազմով: ԱՄՆ-ի նախագահին դեմ էր նաև Ա.Բալֆուրի հորինած միջազգային ֆինանսական մարմնի գոյությանը: Ինքը չէր զիջում տնտեսական կոնցեսիաների խնդրում, քանի որ Ազգերի լիգայի միջոցով մանդատային տարածքներում հաստատում էր «բաց դռների» սկզբունքը: Սա չի նշանակում, որ ԱՄՆ-ը «ամենտեղ պիտի աճապարի: Եվ ընդհանրապես, Անատոլիայում պետք չէ սպասել ամերիկյան ուղիղ նախաձեռնությանը: Բոլորն էլ հարգելու են մանդատավորի բնական առաջնության իրավունքը, բայց սա չպիտի ձևափոխվի պահանջի առաջնության»։ Ավելի լավ է հարավային Անատոլիայում անցկացնել զորավարնահանգապետի ընտրություններ, ու տրամադրել նրան աթոռանիստ Կոնիա քաղաքում: «Այլապես մենք կունենանք մեկ մայրաքաղաքում երկու մանդատավորի ներկայացուցիչների ապրելու դժվարություն»:

Քանի որ Վ.Վիլսոնը դեմ էր նման բաժանմանը, Մեծ Բրիտանիայի վարչապետը ներմուծեց փոփոխություն. «Մյուս ծրագիրը նախատեսում է սուլթանի նիստավայրը Կոստանդնուպոլսում, որտեղից կիրագործվի ողջ Թուրքիայի հսկողությունը: Նման պարագայում Ֆրանսիան հսկելու է Անատոլիայի մի մասը, Իտալիան՝ մյուսը, Հունաստանն էլ՝ երրորդը, այնինչ Միացյալ Նահանգները հսկելու է սուլթանին: Եթե Բրուսան հատկացվում է ֆրանսիական մանդատի ոլորտին ու սուլթանը հնարավորություն ունենա իշխանությունը տարածել ամբողջ Անատոլիայի վրա, սա կստեղծեր իտալացիների համար շատ անախորժ դրություն»: Իտալական ավարի շուրջ ծավալած կռիվը հասել է գագաթնակետի, երբ ԱՄՆ-ի ղեկավարը «հարցրեց. արդյո՞ք թուրքերը չեն կարող ընտրել մի նահանգապետի: Սա սկիզբ կտար Հանրապետությանը» - նկատեց Դ.Լյոյդ Ջորջը: «Դրան առարկություն չունեն», - հավաստել է Միացյալ Նահանգների նախագահը: Ժ.Կլեմանսոյի աջակցությունը ստացած բրիտանացի ղեկավարը ստիպվաց էր խոսել խալիֆի դերի և նշանակության մասին:

Անգլա-ֆրանսիական դաշինքը գերադասում էր միապետական Թուրքիա, հետևաբար՝ ֆրանսիացու պնդումով, հասել են սկզբունքային համաձայնության, «որ քաղաքական առումով Անատոլիան պետք է բաժանվի երկու մասի, այդ բաժանման ձևը թողնվում է հետագա քննարկմանը»:

Շարունակելով դիվանագիտական ճնշումը, մայիսի 17-ին Դ.Լյոյդ Ջորջը տարածեց Ա.Բալֆուրի հուշագիրը, թեև ինքը չէր ժխտում, «որ գուցե ավելի լավ է Անատոլիայում ունենալ միայն մեկ մանդատ»: Ֆրանկո-ամերիկյան առարկությունների դեմ ինքը առաջ է քաշել «ողջ մահմեդական աշխարհի» կարծիքը: Նոր սփռված փաստաթղթում ասվում էր, թե Օսմանյան կայսրությունը հիրավի դատապարտված է կորցնել «եվրոպական կալվածքը, արաբախոս բնակչությունն ու Հայաստանը»: Բայց մնացածը բնակեցված է թուրքերով, ուստի նրանց՝ երկու մայրաքաղաքներով հանդերձ, ինքնիշխան, ու մանդատի ներքո գործող երկու առանձին պետություններին բաժանելու միտումը «խորը ցնցակաթված է հասցնելու մահմեդական կարծիքի լայն զանգվածներին»:

Ինչե՞նք անելու, եթե բնակչությունը ինքը կցանկանա պահպանվել որպես միասնական ժողովուրդ: «Լոնդոնի պայմանագրով զինված իտալացիներին աջակցում է բոցավառ հասարակական կարծիքը», նրանք երբեք էլ չեն բավարարվի հատկացված պատառիկներով, եթե Ֆրանսիան ու Բրիտանիայի կայսրությունը տարածվում են Աֆրիկայում, Կիլիկիայում ու Կովկասում: Հարկավոր է նրանց համապատասխան բաժին հանել Փոքր Ասիայում ու Թուրքիայի հարավում, ընդ որում՝ Անատոլիայի կամ սևծովյան շրջաններում Իտալիան կարող է ստանալ օտարագրեր (կոնցեսիաներ), բայց ոչ մանդատը: Ա.Բալֆուրի կազմած այլընտրանքը նախատեսում էր ազատել ամբողջ թուրքական

պետությունը բոլոր մանդատներից, թեև սուլթանը այդ ծրագրերի համաձայն տեղավորվում էր Բրուսայում կամ Կոնիայում: Կ.Պոլսի վարչակարգը կարող էր ներգրավել Դաշնակիցների լիազորներին, «հասարակական պարտքը, մաքսատներն և որոշակի դեպքերում՝ ոստիկանությունը, հսկվելու են օտար խորհրդատուների կողմից, կամ հետևելու են նրանց հրամաններին»:

Այդ անգամ իտալական շահերի եռանդուն պաշտպանության դեմ բողոքեց Ժ.Կլեմանսոն՝ եթե հույները, այլ զինակիցների նման, շարժվում էին դեպի Ջնյոնիա Դաշնակիցների համաձայնությամբ, ապա Իտալիայի ուժերը իջնում էին փոքրասիական ափը առանց եռյակի ինացությանը: Ձէ որ նրանց ջանքով նոր զբաղեցրած հողերը «չեն ընդգրկվելու փոքրասիական իտալական ազդեցության գոտու» շրջանակում: Վ.Օռլանդոն բացատրում էր, որ այնտեղ անհրաժեշտ էր հաստատել կարգ ու քանոն, ինչն էլ արվել է առանց նրա ինացության:

Ուժեղացնելով հորդորումը, Բրիտանիայի վարչապետը կազմակերպեց Յնդկական պատվիրակության հայտնի ու հանդիսավոր ելույթ: Յնդկաստանի գործերի նախարար Է.Սոնտեգյուն հայտնեց, որ այդ երկրի կառավարությունը դեմ է պայմանագրի նախագծին: Այնուհետև Ահա Խանը, Աֆտաբ Ահմադը, լոնդոնաբնակ Յուսուֆ Ալին, Բիկաների մահառաջան և լորդ Սինհան միաբերան պնդել են, որ Կ.Պոլիսը՝ սուլթան-խալիֆով հանդերձ, Ֆրակիան ու Փոքր Ասիան հարկավոր է թողնել Թուրքիային, բացելով նրա առջև նաև Ազգերի Լիգայի դուռը: Նրանք խոսում էին արդարության, ազատության, ինքնորոշման և Վ. Վիլբոնի 12-րդ կետի մասին: Բոլոր ելույթներում նշվում էր, որ նրանց ազգակիցներ՝ հնդիկ մահմեդականները, շատ գործունյա և հավատարիմ կերպով կռվում էին թուրք ռազմական ուժերի դեմ: Այդ հանգամանքով հանդերձ, նրանք աշխատում էին վախեցնել Դաշնակից առաջնորդներին՝ թուրքերի մասին դրսևորած մտահոգությամբ:

Ուշագրավ է պատվիրակության անդամ Ազա Խանի ելույթը: Երկրի 70 միլիոն մահմեդականների անունից նա հայտարարել է. «Ուշադրություն դարձրեք Թուրքիայի արևելյան, հյուսիս-արևելյան նահանգներին ու ռուսաստանյան Կովկասի հարավ-արևմտյան մարզերին: Հայերը, մահմեդականներ, քրդեր ու թուրքերը կազմում են, այսպես ասած, Արևելյան ռասաների իսկական Մակեդոնիա: Նույնիսկ մինչև 1877թ. Թուրքիայի և Ռուսաստանի միջև առկա սահմանը եղել էր զուտ քաղաքական: Կովկասից հարավում գտնվող սահմանը ազգաբանական կամ աշխարհագրական չէր: Դիմում ենք Ձեզ, ինչպիսի կառավարման ձևն էլ հաստատվի Հայստանի անունը կրողի համար, նա պետք է կիրառվի առնվազն այդ բոլոր շրջաններում, ու պետք է հավասարություն լինի այդ եզրերում գտնվող բոլոր ռասաների, կրոնների և ժողովուրդների համար: Անշուշտ, անցյալում այս երկրներում եղել է սարսապելի արյունահեղությունն, կռիվներ և նման բաներ, բայց եկեք հետևենք, որպեսզի այդ բաները չկատարվեն հայերի կամ այլ ժողովուրդների հետ:

Ես հիմա նրանց յուրաքանչյուրին առանձին առանձին չեմ նշում, բայց հիմա ոչ ոք չի աշխատում ոչնչացնել կամ կրճատել այստեղ ներկա մահմեդական ռասային, ու նրանք պետք է ունենան հավասար իրավունքներ»: Ճառերից հետո Դ.Լլոյդ Ջորջը պնդեց, որ ի նշան անկողմնակալության, Կ.Պոլսի հավանական մանդատավոր ԱՄՆ-ը պետք է թողնի այդ քաղաքում սուլթան-խալիֆին¹⁴:

Մայիսի 19-ին վարչապետը անդրադարձել է ամերիկյան պատվիրակ Դ.Յ.Միլլերի հանդիպմանը Վ.Օռլանդոյի հետ: Այս անգամ իտալացին սկզբից ձևանում էր, որ հավակնում է ամբողջ Անատոլիայի հանդեպ մանդատի, իսկ վերջացրել է դրանով, որ պատրաստ էր կտրել Փոքր Ասիայի հետ կապված հույսերը, եթե նրան հատկացնեն ք.Ֆիումեն: Բրիտանացին սատարում էր այդ մոտեցմանը ու կողմն էր թուրքական ինքնիշխանություն վերականգնելուն: Հիմա ինքը պարտադրում էր ֆրանսիական հսկողություն օտտոմանյան ֆինանսների, տնտեսական ու արտաքին գործերի հանդեպ: Մինչդեռ, այն մանդատավոր Տերությունը, որը հսկելու է Կ.Պոլիսը, «պատասխանատու կլինի միմիայն տեղական գործերի համար»: Վ.Վիլսոնը փորձեց նմանեցնել սուլթանին՝ Վատիկանում գետեղված Հռոմի պապին, բայց վարչապետը ջանում էր նրան ենթարկել օտարագրերին (կոնցեսիաներին) ու հաստատել Ֆրանսիայի գերակայությունը նրա առևտրա-ֆինանսական հարցերում: Միայն ոստիկանությունը կարող է ունենալ միջազգային բնույթ, թեև «քանի որ հիմնական՝ հույն և հայկական բնակչությունը, դուրս են բերվելու թուրքական իշխանությունից, թուրքերի [իրավասության] տակ մնալու են միայն հարաբերաբար անկարևոր փոքրամասնությունները»: Նա ավելացրեց, որ նույն մայիսի 19-ին ինքը Փարիզում անցկացրել է սեփական կառավարության միստ, որտեղ մշակվեց Անգլիայի տեսակետը այդ հարցի վերաբերյալ:

ԱՄՆ-ի ղեկավարը ճգնում էր Ֆրանսիային զրկել նման մանդատից, բայց բրիտանացին սպառնաց «Թուրքական կայսրության մեջ մանդատների ամբողջ հարցի վերանայումով»: Նկատելով, որ նրան և իտալացիներին թողնում են խաղից դուրս, նախագահը գերադասեց հետաձգել քննարկումը: Եթե Իտալիան բավարարվի միայն Ֆիումեն քաղաքով, նա «քանդելու է իր բարեկամությունը Միացյալ Նահանգների հետ»: Դ.Լլոյդ Ջորջը պատասխանեց, որ ինքը կապել է Լոնդոնի պայմանագիրը, ուստի Անգլիան ու Ֆրանսիան ստիպված են հանդուրժել իտալացիներին Դալմաթիայում: Սակայն, նա ամեն կերպ հետ էր մղում նրանց Փոքր Ասիայի հողերից: «Եթե սա չի արվի, այնտեղ կտիրի մշտական խռովություն, սա հավասարապես վերաբերվում է Հայաստանին, որի մանդատը ստանձնելու է Ամերիկան: Մահմեդական պատվիրակությունը ուժգին կերպով դիմակայում էր Կովկասում իտալական մանդատի» հնարավորությանը:

Օրվա երկրորդ միստին Ա.Սոննինոն դրսևորեց մեծ շահագրգռվածությունը օսմանյան խնդրի հանդեպ: Նա խոսում էր ընդվզումների

մասին, ու հիշեցնում էր, որ 1917թ. «Զնյուռնիան էլ վերագրված էր Իտալիային»: Դ.Լևոյդ Ջորջը առարկեց, որ Լոնդոնի պայմանագիրը չէր պարունակում նման փոխհատուցում: Թուրքական թատերաբեմում «կար լույ 1.000 հաբեշցի զինվոր, այդ էլ այն պայմաններում, երբ Թուրքիային դեմ կռվելու համար պահանջվում էր 200-ից մինչև 300 հազար մարդ»: Ի տարբերություն պաշտոնական Հռոմի, «Է.Վենիզելուսը ոչ մի քայլ չի արել առանց Չորսի Խորհրդի համաձայնությանը»: Իտալացին առաջին անգամ լսեց, որ օսմանյան կարգավորման մասնակիցների թվում կար նաև Ռուսաստանը, որը երբեք էլ համաձայնություն չի տվել վիճարկվող քայլերի իրագործմանը: Ս.Սոննինոն չէր հասկանում. «Թե ինչու՞ է ուզում Խորհուրդը [Ասիայից] դուրս բերել նրա զորամիավորումները: ...Մի՞ թե սա նշանակում է, որ յուրաքանչյուր տերությունը կարող է զբաղեցնել ցանկացած վայրը առանց Դաշնակիցների ավանդության, - հարցրեց Դ.Լևոյդ Ջորջը: - Ամերիկայի Միացյալ Նահանգները, - կտրեց արտգործնախարարը, - ազատ է այսպես վարվելու, սակայն Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան մտել են որոշակի համաձայնության մեջ: ...Սեն-ժան-դը-Մորյենում, զրույցելիս, ես պարզաբանել եմ Ս. Սոննինոյին, որ համաձայնությունը կախված է Իտալիայի, Թուրքիայում թափած ճիգերից», - բացատրեց Բրիտանիայի վարչապետը:

Այնուհետև Է.Վենիզելուսը շարադրեց Զյնոռնիա ավելի լայն թափանցելու նրա ծրագիրը. քանի որ հունական զորքը, հավասարապես միտում ունեւ լայնացնել նրա դիրքերը: Որպեսզի նրանք չբախվեն Իտալական ուժերի հետ, Հունաստանի վարչապետը պատրաստ էր կանգնեցնել նրա զորքը Այդինում, ու ստորադրել զինվորներին Ս.Գաֆթելթորպի հրամանատարությանը: Խորհրդը ընդունեց նրա առաջարկը, իսկ Ս.Սոննինոյի նման նախաձեռնությունը՝ ավանդություն չի ստացել: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա հաջորդ օրը ճշգրտվեց, որ նա պարտավոր կլինի ընդունել Ազգերի լիգայի կողմից գծած սահմանները: Այդ տեսակետը կիսում էին ինչպես Դ.Լևոյդ Ջորջը, այնպես էլ Վ.Վիլսոնը¹⁵:

Մայիսի 21-ին Մեծ Բրիտանիայի վարչապետը սփռեց մի նոր հուշագիրը, որտեղ Ֆիլմեն ժամանակավորապես դնում էին Ազգերի լիգայի իրավասության տակ, իսկ Իտալիան հրաժարվում էր Դալմաթիայից: Օսմանյան կայսրության մեջ ԱՄՆ-ը ստանում էր Կ.Պոլսի ու Նեղուցների մանդատը: Որպես այլընտրանք, նա կարող էր ունենալ ավելի մեղմ մանդատը ամբողջ Անատոլիայի հանդեպ, բայց սուլթանն ու կառավարությունը մնում էին Կ.Պոլսում: Ուշադրություն դարձնենք, հուշագիրը խոսում է ամբողջ Անատոլիայի, և ոչ թե Օսմանյան կայսրության մասին: Երկրորդ այլընտրանքով, եթե ԱՄՆ-ը չէր կարողանա ստանձնել Անատոլիան, երկրամասը պետք է ենթարկվեր սուլթանի ինքնիշխանությանը: Երկու տարբերակներում էլ Անատոլիան ստանում էր ելքը դեպի Միջերկրական, Մարմարա և Սև ծովերը, իսկ Այդինի նահանգի մի մասը անցնում էր Հունաստանին: Բացի դրանից,

«(5) Ամերիկայի Միացյալ Նահանգները ունենալու է լիիրավ մանդատը Հայաստանի ու Կիլիկիայի հանդեպ:

(6) Հայաստանի հանդեպ մանդատը ներառնելու է նախնական մանդատը Ռուսահայաստանի, Ադրբեջանի և ամբողջ կովկասյան երկրամասի հանդեպ՝ մինչև Ռուսական խնդրի լուծումը»:

Ֆրանսիան ստանում էր Սիրիայի, իսկ Մեծ Բրիտանիան՝ Միջագետքի և Պաղեստինի նախնական մանդատը: Արաբստանը դառնում էր անկախ, խալիֆի խնդիրը թողնում էին մահմեդականների որոշմանը: Հուլիանոսը մշակվեց Փարիզում անցկացրած բրիտանական կառավարության նիստում, որտեղ նախարարները դեմ են արտահայտվել Փոքր Ասիայի բաժանմանը: «Դաշնակիցները լիիրավ իրավունք ունեն ասելու, որ թուրքերը չպետք է իշխեն այդպիսի անհարազատ ռասաների նկատմամբ, ինչպիսիք են հույները, հայերը և արաբները, ում որ նրանք հաճախ էին ենթարկում բռնակալությանը»: Սակայն, «եթե Ջնյուռնիան, Կոստանդնուպոլիսն ու Հայաստանը բացառվեն. Անատոլիայի բնակչությունը իննսուն տոկոսից ավելի հավանաբար կլինի թուրքական»: Բրիտանիայի կառավարությունը գտնում էր, որ Կ.Պոլիսն ու Անատոլիան պետք է ստանան մեկ մանդատավոր:

«Հայաստանում, Միջագետքում ու Սիրիայում, որտեղ առկա են ոչ թուրքական ռասաները, կարող են կառավարել այլ պետությունները: Սակայն Անատոլիայի դեպքում հարկավոր է իրագործել կառավորման նույն տեսակը, այն էլ թուրքական ռասային պատկանող անձերի ձեռքով: Այնուամենայնիվ, ցանկալի է հաստատել հսկողության նույն տեսակը: Այլապես կարող են տեղի ունենալ մնացած հույների, հայերի և այլ ռասայական պատկանելության բնակիչների կոտորածներ: Բրիտանական պատվիրակությունը կգերադասեր, որ այդ հսկողությունը կենսագործեր Ամերիկան: ...Եթե Ֆրանսիային տրվի Անատոլիայի մանդատը՝ Իտալիան իրավունք կունենար բողոքել, որպեսզի հիմք ներկայացնելով Լոնդոնի պայմանագիրը»: Եթե ԱՄՆ-ը «չի կարողանա հարթել ճանապարհը դեպի մանդատի ընդունում, ապա ես այժմյան համակարգին այլընտրանք չեմ տեսնում, բացի թուրքերի կողմից իրականացվող լիակատար հսկողության: Ամերիկան մանդատ է ունենալու Հայաստանի ու Կոստանդնուպոլսի հանդեպ, թուրքերի համար էլ անհնարին կլինի մնալ բոլորովին ազատ՝ նրանք չեն կարողանա զբաղվել բռնակալությամբ ըստ նրանց ցանկությանը»:

Դ.Լլոյդ Ջորջը եզրափակեց, որ Վ.Վիլսոնին անհրաժեշտ է շուտափույթ վերադառնալ տուն ու ստանալ երկրի նախնական թույլտվությունը: Նրա կարծիքով, մինչև Ռուսաստանի կայունացումը ԱՄՆ-ը պետք է ստանձներ Կովկասի հսկողությունը: Այս, մինչև Ռուսաստանի կայունացման հանգամանքը, չէր կարող չմտահոգել Վ.Վիլսոնին. չէ որ «ներկայումս այնտեղ հսկում են բրիտանացիները, որոնք այլևս մնալու հնարավորություն չեն տեսնում»: Ադրիատիկայի ավազանի վերաբերյալ նախագահը պնդում էր հանրաքվեյի սկզբունքը, իտալական զորքերի

դուրս բերումը, Ազգերի լիգայի նախնական վարչությունը ու Ֆիունեյի՝ ազատ քաղաքի կարգավիճակը: Նա չէր առարկում թուրքական ինքնիշխանությանը Անատոլիայում, թեև ակնարկում էր, որ այդ տարածքը ղեկավարելու պարագային, սուլթանը կարող է «երբեմն կառավարվել մանդատավորի խորհրդով»: Ընդ որում, խորհուրդների մատուցողը կարող է լինել եվրոպական երկիր: «Եթե Կոստանդնուպոլսում և Յայաստանում մանդատավոր դերը ստանձնի միևնույն Տերությունը՝ սուլթանին շատ դժվար կլինի պատճառել մեծ անհանգստություն»:

Վ.Վիլսոնը հավակնում էր Սիրիային, բայց Ժ.Կլեմանսոն իսկույն ընթոստացավա. 1918թ. աշնանը նա արդեն հանձնեց Մոսուլն ու Պաղեստինը՝ Սիրիայի դիմաց, սակայն Մեծ Բրիտանիայի զորքը չի շտապում զիջել նրա դիրքերը ֆրանսիական ուժերին: 1919թ. սկզբին ինքը նույնիսկ համաձայնություն տվեց ԱՄՆ-ին տրամադրել Կիլիկիայի մի մասը: Այդ ամենը արվում էր անատոլիական մանդատի ակնկալիքով: «Միայն երեկ առաջարկվել է, որ Ֆրանսիան պետք է ստանա մանդատը ամբողջ Անատոլիայի հանդեպ: Սակայն այսօր պ.Լլոյդ Ջորջը առաջ է քաշում նոր տարբերակներ: ...Ֆրանսիան այն երկիրն է, որը աշխարհի այլ երկրների համեմատ խոշորագույն դրամային շահեր ունի Թուրքիայում, և իհարկե չպետք է վտարվի Փոքր Ասիայից այդպիսի երկու հիմնավորումներով, ինչպիսիք են Մահմեդական ու Իտալական հարցերը»: Յայտարարությունը, որ ԱՄՆ-ը «ունենալու է մանդատը ոչ միային Կոստանդնուպոլսի և Յայաստանի, այլև նրանց միջև գտնվող ամբողջ երկրի հանդեպ, կարթնացներ վատ խմորումներ ու բաժանում կառաջացներ եվրոպական ամբողջ աշխարհում»: Նման լուծմների դեպքում նա ստիպված կլիներ թողնել կառավարությունը: Բացի նրանից, գոյություն ունի ֆրանկա-իտալական դաշինքի հնարավորություն:

Բրիտանիայի վարչապետը հիշեցրեց, որ Սիրիան մնում է ֆրանսիացիներին, իսկ եթե Բրիտանիային հատկացնում են նույն տեղավայրում զետեղված երկաթուղին - ապա ինքը փոխհատուցում է Միջագետքի նավթի կեսով: Ֆրանսիան ուզում էր հյուսիսային Անատոլիա, օտարագրերի առաջնային հնարավորությամբ հանդերձ, սակայն Վ. Վիլսոնի մտադրությունը բացառում է նման առաջնություն: Թուրքիայի հետ առևտրի ոլորտում առաջին տեղը պատկանում էր Անգլիային: Ինքը չի ցանկանում քննարկել Սայքս-Պիկոյի համաձայնության մանրամասնությունները, այնուամենայնիվ, Ֆրանսիան շատ աղոտ մասնակցություն է ունեցել թուրքերի դեմ կռիվներում: Ելնելով այս, և այլ դրդապատճառներից, վարչապետը դեմ էր արտահայտվում Անատոլիայի բաժանմանը: Ու քանի որ Վ.Վիլսոնը պատրաստ չէր թե՛ վիճաբանություն տանել հողային հարցի շուրջ, ինքը հետ է կանչել իր փոքրասիական նկրտումները: ԱՄՆ-ին «դժվար է վերցնել նույնիսկ այն Յայաստանի մանդատը, որտեղ նա վաղուց ի վեր ունի մշտական շահեր, և որտեղ ամերիկացիները զգալի փողեր են ծախսել հայ ժողովրդի սփոփանքի համար»: Ինչ վերաբերում է Կ.Պոլսին, «կարծում են,

որ քաղաքական իմ հակառակորդ, հասարակության որոշ դեմքերը կաջակցեն ինձ, մանդատը վերձնելու գործում»։ Սակայն ավարտելով խոսքը նախագահը նորից կրկնեց, որ ԱՄՆ-ը պատրաստ է սուլթանին խորհուրդներ տալ ֆինանսների, վաճառականության ու ոստիկանության ոլորտներում¹⁶։

Մայիսի 22-ին Ժ.Կլեմանսոն անդրադարձել է Զ.Բերանժե-Վ.Լոնգի նավթային բանակցություններին, Պաղեստինին ու Սիրիայի մակերեսի փոքրացմանը։ Հիմա ինքը կրկնում էր իտալացիների նվազը՝ մեջբերելով Սայքս-Պիկոյի համաձայնագրի, միայն նրան հարմար բեկորները։ Դ.Լլոյդ Ջորջը հետ մղեց այդ նոր գրոհը. Բրիտանիայի՝ 200.000 զինվորների կողքը թուրքերի դեմ կռվել են 2.000 ֆրանսիացի ռազմիկ։ Ուստի ներկայումս ինքն է թելադրում կարգավորման տեսքը, իսկ նավթը չի կարող ազդել հողային խնդիրների վրա։ Երբ Վ.Վիլսոնը մեջբերեց բնակիչների տրամադրվածության փաստարկը, Ֆրանսիայի Վագրը ստիպված էր նահանջել. արաբները բացեիբաց արտահայտվում էին անգլիացիների օգտին։ Վերջինները պատրաստ էին Իտալիային հատկացնել աֆրիկյան հողի 103.600 քար.կմ.։ Չորս օր հետո Վ. Օռլանդոն տեղեկացրեց Գերագույն Խորհուրդը, որ նրան բավարարում է այդ կարգի առաջարկը, իսկ Վ.Վիլսոնը, Ժ.Կլեմանսոյի հետ միասին, վավերագրել են, որ 1915 թվականից ի վեր դրությունը փոխվել է, և հիմա հնարավոր չէ ամբողջությամբ անտեսել շատ-շատերի ազգային շահերը։ «Չնարավոր չէ՞ արդյոք ստանալ այն ամենը, ինչ որ նա ուզում է, հանրաքվեյի միջոցով»։ Իր հերթին Վ.Օռլանդոն ամեն կերպ պաշտպանում էր Լոնդոնի պայմանագիրը, ու հանրաքվեյին չէր դիմում։ Ամսի 28-ից 31-ը պարզվեց, որ «Ավստրիայի հարավային սահմանը... գծվելու է ըստ 1915թ. ապրիլի 26-ի Լոնդոնի դաշնագրի», որոշ հավելումներով հանդերձ։ Սա չէր վերաբերվում Արևելյան կարգավորմանը։ Մայիսի 31-ին Ժ.Կլեմանսոն հայտնել էր, որ «գորքեր է ուղարկում Կիլիկիա, չնայած, ֆրանսիական տեսակետից, սա մեծ նշանակություն չունի, քանի որ Կիլիկիան անցնելու է» ԱՄՆ-ին։ Նա կգերադասեր բանակի ուժեր ունենալ Սիրիայում՝ բրիտանացիների կողքը։ Դ.Լլոյդ Ջորջը արձագանքեց, որ սա «մեծ խռովություններին» ծնունդ կտար¹⁷։

Այսպիսով, 1) քառակողմանի Լոնդոնի պայմանագիրը ընդհանուր առմամբ անտեսվել է Հայաստանի պատմագիտության մեջ, կամ էլ անհիմն կերպով համարվում էր եռակողմ՝ իրականում, նրան կնքել են ռուս-անգլո-ֆրանսիական դաշինքը և Իտալիան։ Վավերագիրը հիմք է ծառայել Իտալիային, Փարիզում 1919թ. ապրիլ-մայիսյան բանակցություններ վարելիս, ինչին աջակցում էին Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան, իսկ ԱՄՆ-ի վերաբերմունք ժխտական էր։

2) Փարիզի վեհաժողովում, Օսմանյան կայսրության միասնական մանդատի մասին բանակցություններ չէին վարում ոչ ամսի 6-ին, ոչ էլ 13-14-ին կամ մայիսյան այլ օրերին։ Ամսի 5-ից հետո, երբ անգլիացիք հայտարարեցին, որ նրանց բանակը պետք է հեռանա Կովկասից, Վ.

Վիլսոնը մայիսի 6-ին հիշատակեց մեկ մանդատը ամբողջ Թուրքիայի համար: Սակայն երբեք, մայիսի 14-ը ներառյալ, խաղակիցները ԱՄՆ-ին չէին հատկացնում Հայաստանի, Կ.Պոլսի և Անատոլիայի մանդատը. նրան ստիպում էին ընտրության կատարել օսմանյան մայրաքաղաքով հանդերձ Հայաստանի, և Անատոլիայի միջև:

3) Մայիսի 13-ին Վ.Վիլսոնը՝ իր բոլոր բանակցությունների ընթացքում, առաջին և եզակի անգամ ստույգ ասեց ամբողջ կայսրությունը ընդգրկող մանդատն ունենալու իր ցանկության մասին, բայց Դ.Լլոյդ Ջորջը չեզոքացրեց այդ ձգտումը, հաստատելով Ֆրանսիայի կամ Իտալիայի դիրքերը քննարկվող երկրի խորքերում: Մայիսի 14-ին, 17-ին ու 21-ին Մեծ Բրիտանիայի վարչապետը համաձայն էր, որ Անատոլիա ավելի լավ է չկիսել, բայց այդ դեպքում նրան ավելի լավ է ենթարկել ֆրանսիական մանդատին, կամ թուրքական ինքնիշխանությանը:

4) Ոչ թե Չորսի տորհրդի որոշումը. այլ միմիայն 1919թ. մայիսի 21-ին հրապարակված Դ.Լլոյդ Ջորջի հուշագրում հիշատակվում էր Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի, Կ.Պոլսի ու Նեղուցների հանդեպ ամերիկյան մանդատը, որին գումարվում էր, մինչև Ռուսաստանի կայունացում գործող Արևելյան Հայաստանի, Ադրբեջանի ու Կովկասի հանդեպ ժամանակավոր մանդատ: Մայիսի 31-ին, Ժ.Կլեմանսոն համաձայնվել է ԱՄՆ-ին զիջել Կիլիկիա, բայց դրա փոխարեն արգելվում էր ամերիկացիներին մուտք Սիրիա, Պաղեստին ու Փոքր Ասիա: Սա է մայիսյան բանակցությունների ճշգրիտ պատկերը: Բաքվի նավթից մինչև Նեղուցներ ու Կիլիկիա ձգվող աշխարհը մեծ էր, սա ծանրակշիռ ու լավագույն առաջարկն էր, որով Դաշնակիցները դիմեցին Սպիտակ տան տիրոջը: Այնուամենայնիվ, Վ.Վիլսոնը ուժգին արձագանք, կամ դրական պատասխան չի տվել: Ավելի ուշ՝ Վաշինգտոնում տարվող քարոզչության ժամանակ, ամսի 21-ի առաջարկը երբեք էլ լայն տարածման առարկա չի դարձել:

5) Դեռևս չճանաչված Հայաստանի Հանրապետության դիվանագիտությունը՝ իր ուժերի սահմաններում, աշխանում էր ներկայացնել Հայկական հարցը: Փարիզում անցկացվեց Հայ ազգային համագումարը, տեղի են ունեցել պաշտոնական հանդիպումներ էմիր Ֆեյսալի ու Վ.Վիլսոնի հետ, ապրիլի 4-11-ին Թիֆլիսում բանակցություններ էին տարվում Անդրկովկասում բրիտանական զորքի հրամանատարության հետ: Փարիզից հղած որոշ գնահատումները դիպուկ էին և ուշագրավ, թեև հետագայի ընդհանուր ակնկալումը չափից վարդագույն էր: Հիմնական սխալը կայանում էր դրանում, որ կենսական նշանակության ազգային հարցերի լուծումը սպասվում էր ուրիշներից, Փարիզի վեհաժողովից:

Ամփոփենք.

1. 1915-1917թթ. Օսմանյան կայսրության բաժանման ամբողջ ծրագիրը արտացոլվել է Լոնդոնի, անգլո-ամերիկյան «անվորսալի», Սայքս-Պիկոյի և Սեն-ժան-դը-Մորյենի պայմանագրերում: Նրանցից

միային երրորդն է պատշաճ կերպով լուսաբանվել հայ պատմագրության մեջ, մնացած փաստաթղթերը դեռևս դուրս են մնացել հարկավոր վերլուծությունից:

2. Այնինչ, 1919թ. գառնանը՝ Փարիզի վեհաժողովում, Մեծ Տերությունները շարունակեցին բանակցել, ելնելով հենց Լոնդոնի պայմանագրից: Այդ փաստաթղթով զինված Իտալիան փորձում էր զորք հաստատել Կովկասում, իսկ ԱՄՆ-ը՝ ի դեմս Վ.Վիլսոնի, ձգտում էր չեզոքացնել պայմանագիրը, հիմք ընդունելով հայտնի «14 կետերը»: Նախագահը չէր հիշատակում 1916թ. փետրվարի 14-ի անգլո-ամերիկյան «անորսալի համաձայնագիրը», իսկ նրա ջանքերը ուղղված էին Կիլիկիայում հաստատվելու նպատակին:

3. Վ.Վիլսոն-Ս.Սոննհինո հակասությունը և ԱՄՆ-ի՝ Կիլիկիայի հանդեպ հավակնությունը, ստիպել էր Ժ.Կլեմանսոյին պնդել Լոնդոնի պայմանագրի իրավասության վրա: Աջակցելով նրան, Դ.Լլոյդ Ջորջը սրում էր ամերիկա-իտալական ու ամերիկա-ֆրանսիական հակասությունները: Նա ԱՄՆ-ին առաջարկեց ռուսական ռազմահասույթի բաժինը՝ Կ.Պոլսով ու Հայաստանով:

4. Առավել կարևոր ապրիլի 19-21-ի, 24-ի, մայիսի 5-6-ի, 13-14-ի, 17-ի, 19-22-ի բանակցությունների ժամանակ Վ.Վիլսոնը աշխատում էր ԱՄՆ-ին ապահովել որքան հնարավոր էր մեծ տարածք, չբացառելով միակ մանդատը ամբողջ Օսմանյան կայսրության հանդեպ, հետևաբար. ինքը դեմ էր Կովկասում իտալական ուժերի զետեղմանը: Իր հերթին, Դ.Լլոյդ Ջորջը համաձայն էր ԱՄՆ-ին հանձնել միայն Արևելյան ու Արևմտյան Հայաստանը, Կ.Պոլսով հանդերձ: Ինքը չեզոքացնում էր նախագահի հավակնությունները Սիրիայի և Կիլիկիայի նկատմամբ:

5. Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակության ղեկավարներ Ա.Ահարոնյանը, Պողոս Նուբարն ու Ա.Տեր-Հակոբյանը, որոնք տեղ չեն ստացել Վեհաժողովի սեղանին, ապրիլի 17-ին հանդիպում են ունեցել Վ.Վիլսոնի հետ: Ջրույցի ընթացքում քննարկվել է հայկական մանդատի հեռանկարը:

6. Միջազգային հարաբերությունները ուսումնասիրելիս, հարկավոր է հիշել, որ միաժամանակ սակարկում էին Ֆիումե քաղաքի, Սիրիայի և Կիլիկիայի, Կ.Պոլսի, Արևմտյան Հայաստանի և Կովկասի շուրջ: Եթե զիջում էին նշված վայրերից մեկը, ուրեմն փորձում էին ձեռք բերել մեկ ուրիշը: Ուստի իմանալով, ինչով է ավարտվել վեճը Նեղուցների կամ Սիրիայի շուրջ, հնարավոր էր եզրակացության գալ՝ ուժերի ինչպիսի հարաբերություններ են սահմանվել Հայաստանի նկատմամբ:

Մեջբերումներ

1) Agreement Between France, Russia, Great Britain and Italy, Signed at London, April 26, 1915. Papers Relating to the Foreign Relations of the United States. In 2 vols. Vol.I: 1917, supp.2 The World War. Wash., GPO, 1932, p.497; "Current History," 1920, March, vol.IX, p.II,

p.499; vol.XI, p.500; Documents on British Foreign Policy 1919-1939. Ed.by E.L. Woodward, R.Butler. 1st Series. Lnd., HMSO, 1947, vol.I, p. 84-85, vol.IV, p.241-248 (այնուհետև British Documents); Ключников Ю.В. и Сабанин А.В. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч.II От империалистической войны до снятия блокады с Советской России. М., Наркоминдел, 1926, с.40-43, 84-85; «Հայաստանի ավտոնոմիան» յեվ Անտանտան: Վավերագրեր ինպերիալիստական պատերազմի շրջանից: Յերեվան, Պետհրատ, 1926, էջ 50-53: Պայմանագրերի մասին նալիր՝ Лазарев М.С. Крушение турецкого господства на Арабском Востоке (1914-1918 гг.). М., Восточная литература, 1960, с.126-137, 191-192; Акопян С.М. Западная Армения в планах империалистических держав. Ереван, АН Арм. ССР, 1967, с.197-222; Hovannisian R.G. The Allies and Armenia, 1915-18. "Journal of Contemporary History." Lnd., 1968, vol.3, N° 3, p.145-168; Հայկական հարց: Հանրագիտարան: Երևան, Հայկական հանրագիտարան, 1996, էջ 36-37, 397-398:

2) United States National Archives, Washington D.C., Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, class 180.03401/document 101 (այնուհետև US NA, RG); Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference (այնուհետև Papers Relating), vol.V, p.3; British Documents, vol.IV, p.251.

3) US NA, RG 256, 180.03401/101, 180.03101/25; Papers Relating, vol.V, p.6-7.

4) Great Britain, Foreign Office Archives. Public Record Office, class 371 Political (այնուհետև FO, 371), 91135, 94556, 102249/3251/117; British Documents, vol.4, p.1093-1097, 1100-1101.

5) Նալր՝ Papers Relating, vol.5, 6. Wash., US GPO, 1946.

6) FO 371-3667, 84449/11067/58; British Documents, vol.3, 337-338; ՀՀ Պատմության Պետական Կենտրոնական արխիվ (այնուհետև ՀՀ ՊՊԿԱ) ֆ.200, ց.2, գ.49, ք.1-3, 5; գ.51, ք.6:

7) US NA, RG 256, 180.03401/108-109.

8) US NA, RG 256, 180.03401/110, 118/App/I; British Documents, vol.IV, p.1.

9) ՀՀ ՊՊԿԱ ֆ.200, ց.2, գ.50, ք.1-4; գ.51, ք.1-9:

10) US NA, RG 256, 180.03401/123, 130, 137, 138, 138/App/III, 143, 145; ՀՀ ՊՊԿԱ ֆ.199, ց.1, գ.12, մ.II, ք.144-150; գ.22, մ.II, ք.83-83 դարձ; ՀՀ Հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այնուհետև ՀՀ ՀԲԿՓԿՊԱ) ֆ.4033, ց.2, գ.962, ք.39-44; գ.1021, ք.1-7:

11) US NA, RG 256, 180.03401/144.

12) Ibid., 180.03401/145, 148, 148/App. 4; ՀՀ ՊՊԿԱ §.199, g.1, գ. 12, ս. II, ք.110; §.200, g.1, գ.35, ք.123-127Ա; g.2, գ.55, ք.1-5; ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ §. 4033, g.2, գ.963, ք.130-136:

13) US NA, RG 256, 180.03401/10 1/2.

14) Ibid., 180.03401/13½; 13½/App.I, II; 15½ ; 15½/App, 17, 17/App, 18.

15) Ibid., 180.03401/18½; 19, 19/App.I, 20.

16) Ibid., RG 256, 180.03401/20½, 20½/App.III.

17) Ibid., 180.03401/22½, 33, 37¼, 38, 40, 41, 43, 43/App.III; FO 371/4180, 82836/2117/44; British Documents, vol.IV, p.253-254, 257-258:

©

23 էջ

Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, հ.8: Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ին-տ, 2007, էջ 252-274 (հրատարակվել է ռուսերեն):